ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետությունում բացակայում է անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված հարաբերությունները կարգավորող միասնական օրենսդրական ակտ: Անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ իրավակարգավորումները ամրագրված են տարբեր նորմատիվ իրավական ակտերում՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ ենթաօրենսդրական մակարդակում: Անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտերն են՝

1) «Քաղաքացու անձնագրի մասին» օրենքը,
2) «Նույնականացման քարտերի մասին» օրենքը,
3) «Օտարերկրացիների մասին» օրենքը,
4) «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը,
5) «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքը,
6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» N 821-Ն որոշումը,
7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին» N 318-Ն որոշումը և այլն:

2025 թվականի հուլիսի 3-ին ընդունվել է, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՕ-233-Ն օրենքը, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող յուրաքանչյուր կատեգորիայի անձի նույնականացնող փաստաթղթերի տեսակները: Միաժամանակ, նշված օրենքի կարգավորման առարկան չի ընդգրկում անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված հարաբերությունների համապարփակ կարգավորումը, և, մասնավորապես, չի կարգավորում անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման, փոխարինման, անվավեր ճանաչման և այլ էական ընթացակարգային հարցեր:

Բացի այդ, տարբեր օրենքներում հատվածական կարգավորումների առկայությունը հանգեցրել է նրան, որ օրենսդիրը մի շարք դեպքերում կրկնել է նույնաբովանդակ

իրավակարգավորումներ՝ տարբեր տեսակի անձը հաստատող փաստաթղթերի համար: Մասնավորապես, «Քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» օրենքներն ունեն նույն կառուցվածքը և ամրագրում են, ըստ էության, նույնաբովանդակ կարգավորումներ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հետ կապված հարաբերությունների գերակշռող մասը փաստացի կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 821-Ն որոշմամբ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կենսաչափական համակարգի ամբողջական ներդրումն ու գործարկումը դադարեցվում է այդ օրենքով նախատեսված անձնագրերի տրամադրումը (փոխանակումը): Միաժամանակ, նույն օրենքի 5-րդ հոդվածի 18-րդ մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տրամադրվել նաև կենսաչափական տվյալներ չպարունակող այլ անձնագիր՝ մինչև նոր համակարգի ամբողջական ներդրումը:

Բացի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից, Հանրապետության տարածքում գտնվող այլ կարգավիճակ ունեցող անձանց (օտարերկրացիներ, փախստականներ և այլն) անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ միասնական իրավակարգավորումներ պարունակող իրավական ակտ առկա չէ: Նշված անձանց վերաբերյալ կարգավորումները նախատեսված են համապատասխան ոլորտային օրենքներով, ինչպիսիք են՝ «Օտարերկրացիների մասին» և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքները, որոնք հիմնականում սահմանում են տվյալ կարգավիճակի ձեռքբերման հիմքերը, իրավունքները և պարտականությունները: Սակայն նույնականացման փաստաթղթերի տրամադրման և դրանց հետ կապված ընթացակարգային հարցերը նշված օրենքներում ամբողջական և համակարգված կարգավորում չեն ստացել:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում գործում է նույնականացման փաստաթղթերի վերաբերյալ միասնական և համապարփակ օրենք: Մասնավորապես, Էստոնիայի և Լատվիայի օրենսդրությամբ նախատեսված է մեկ միասնական իրավական ակտ, որը կարգավորում է ինչպես քաղաքացիների, այնպես էլ՝ այլ կարգավիճակ ունեցող անձանց նույնականացման փաստաթղթերի հետ կապված հարաբերությունները: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս՝ ապահովելու իրավակարգավորման միասնականություն, կանխել կրկնությունները և բարձրացնել վարչարարության արդյունավետությունը[1]:

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի համակարգի ներդրման նպատակով իրականացվել է պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունել է «ՀՀ-ում կենսաչափական անձնագրերի և նույնականացման

[1] https://www.vestnesis.lv/ta/id/62793-personu-apliecinosu-dokumentu-likums?utm

քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման մասին» N 2346-Ա որոշումը: Այնուհետև, 2024 թվականի հունվարի 3-ին հայտարարվել է ընտրության ընթացակարգ՝ համապատասխան ծառայությունների ձեռքբերման նպատակով, իսկ 2025 թվականի մարտի 31-ին գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել IDEMIA Identity Security France S.A.S and A.C.I Technology S.a.r.l կոնսորցիումը: Ծրագրի իրականացման համար ստեղծվել է «ՀԱՅՓԱՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, և 2025 թվականի ապրիլի 25-ին կնքվել է համապատասխան պայմանագիր Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և նշված ընկերության միջև: Նշված ծրագրի շրջանակներում մասնավոր գործընկերն իրականացնում է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տպագրությունը, դիմումատուների սպասարկումը, կենսաչափական տվյալների հավաքագրումը և այլ հարակից գործառույթներ: Այս հանգամանքը պայմանավորում է նաև անհրաժեշտություն՝ օրենսդրական մակարդակում հստակ սահմանելու մասնավոր գործընկերոջ դերը, լիազորությունները և գործունեության իրավական հիմքերը:

Միաժամանակ, նոր համակարգի ներդրումը պայմանավորում է պետական տուրքերի չափերի, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի վավերականության ժամկետների վերանայման անհրաժեշտությունը: Տուրքերի վերանայումը պայմանավորված է ինչպես կենսաչափական տեխնոլոգիաների կիրառմամբ, այնպես էլ՝ ծառայությունների մատուցման գործընթացում մասնավոր գործընկերոջ ներգրավմամբ:

Հաշվի առնելով մասնավոր գործընկերոջ ընտրության արդյունքները, ներկայացված ֆինանսական առաջարկը, ինչպես նաև գների ընդհանուր աճի միտումները՝ պետական տուրքերի չափերը ենթակա են վերանայման: Անձը հաստատող փաստաթղթերի վավերականության ժամկետները ևս սահմանվում են՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները և մասնավոր գործընկերության շրջանակներում ներդրվող համակարգի առանձնահատկությունները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է ընդունել անձը հաստատող փաստաթղթի մասին մեկ միասնական օրենք, որով կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող տարբեր խմբերի անձանց՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների և այլ կարգավիճակ ունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված իրավահարաբերությունները՝ անձը հաստատող փաստաթղթերի տեսակները, դրանց տրամադրման ընթացակարգը, տրամադրումը մերժելու հիմքերը, անվավեր ճանաչելու և ուժը կորցնելու հետ կապված հարաբերությունները և այլն:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ տարբեր տեսակի անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացում ներգրավվելու է նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքին համապատասխան ընտրված մասնավոր գործընկերը, նոր օրենքով

նախատեսվում է սահմանել նաև կարգավորումներ մասնավոր գործընկերոջ դերակատարման վերաբերյալ:

Անձը հաստատող փաստաթղթի մասին նոր օրենքով առաջարկվում է սահմանել՝

1. Անձը հաստատող փաստաթղթերի տեսակները.

Սահմանվում են յուրաքանչյուր կարգավիճակի անձի համար անձը հաստատող փաստաթղթի՝ տվյալ կարգավիճակին համապատասխան տեսակները: Նախատեսվում են նաև դրանց հասկացությունները և կիրառման շրջանակը:

2. Անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման կարգը և մերժման հիմքերը.

Սահմանվում են յուրաքանչյուր խմբի անձանց անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման կարգը և տրամադրումը մերժելու հիմքերը: Անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման ընթացակարգը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները:

Նախ, անձը հաստատող փաստաթղթերի գրեթե բոլոր տեսակների տրամադրման գործընթացում ներգրավվելու է մասնավոր գործընկերը, որն իրականացնելու է տվյալ գործընթացում մի շարք կարևոր գործառույթներ: Հետևաբար, կարգավորումները պետք է սահմանվեն այնպես, որ հաշվի առնեն մասնավոր գործընկերոջ ներգրավվածությունը և հստակ տարանջատեն պետական լիազոր մարմնի վարչարարական գործառույթները և մասնավոր գործընկերոջ կողմից մատուցվող ծառայությունների գործառույթները:

Երկրորդ, անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացի անհրաժեշտ փուլերից է անձանց կենսաչափական տվյալների (ստորագրություն, լուսանկար, մատնահետքեր) հավաքագրումը: Ուստի անհրաժեշտ է սահմանել առանձին իրավակարգավորումներ կենսաչափական տվյալների հավաքագրման կարգի և պայմանների վերաբերյալ:

Բացի այդ, ներկայումս տարբեր օրենսդրական ակտերով նախատեսված է անձը հաստատող փաստաթղթի փոխանակման ընթացակարգ՝ սահմանելով սահմանափակ հիմքեր փաստաթղթի փոխանակման համար: Առաջարկվում է հրաժարվել փաստաթղթերի փոխանակման գաղափարից՝ վերացնելով նաև դրա սահմանափակ հիմքերը և անձին հնարավորություն տալ՝ իր կամքով ցանկացած ժամանակ ստանալու անձը հաստատող նոր փաստաթուղթ՝ վճարելով դրա համար սահմանված պետական տուրքը:

Ընդ որում, նախատեսվել է ՀՀ քաղաքացու անձնագրի գործողության ժամկետի միասնական ստանդարտ, այն է՝ 10 տարի վավերականություն:

3. Անձը հաստատող փաստաթղթերի անվավերության և ուժը կորցնելու հիմքերը.

Առաջարկվում է առանձին հոդվածով կարգավորել անձը հաստատող փաստաթղթերի անվավեր ճանաչման հիմքերը, ընթացակարգը և ուժը կորցնելու հիմքերը: Այս համատեքստում հարկ է նշել, որ գործող օրենսդրական կարգավորումները նախատեսում են միայն անձը հաստատող փաստաթղթերի անվավերության հիմքերը, որոնք, սակայն, միանշանակ չեն: Մասնավորապես, առանձին հիմքեր, որոնք իրենց բովանդակությամբ վերաբերում են

փաստաթղթի ուժը կորցնելուն, սահմանված են որպես անվավերության հիմքեր: Օրինակ՝ փաստաթղթի վավերականության ժամկետի լրանալը սահմանված է որպես անվավերության հիմք, մինչդեռ այն փաստաթղթի ուժը կորցնելու, այլ ոչ թե՝ անվավեր ճանաչելու հիմք է:

Հետևաբար, անհրաժեշտ է նոր օրենքով սահմանել ինչպես փաստաթուղթն անվավեր ճանաչելու, այնպես էլ դրա ուժը կորցնելու կարգավորումները՝ հստակ տարանջատելով դրանց հիմքերը:

4. Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կարգավորումները,

Նոր օրենքով կարգավորվում են պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում մասնավոր գործընկերոջ իրավասությունները, ինչպես նաև՝ նրա և հանրային գործընկերոջ ու դիմումատուների միջև փոխհարաբերությունները:

Մասնավորապես, սահմանվում են անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացում պետական լիազոր մարմնի և մասնավոր գործընկերոջ միջև գործառույթների բաշխման, ինչպես նաև՝ դիմումատուի և մասնավոր գործընկերոջ փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները:

Հաշվի առնելով, որ մասնավոր գործընկերոջ ներգրավումը կատարվում է պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի և ենթաօրենսդրական ակտերի հիման վրա, օրենքով նախատեսվում է, որ կառավարության որոշմամբ կարող է սահմանվել մասնավոր գործընկերոջ ներգրավում անձը հաստատող փաստաթղթերի առանձին տեսակների տրամադրման գործընթացում:

Միաժամանակ, սահմանվում է, որ մասնավոր գործընկերը կարող է իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք վարչական ակտի ընդունում, գործողություն կամ անգործություն չեն և ինքնին իրավական հետևանքներ չեն առաջացնում անձանց համար:

Դիմումատուն համարվում է մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը մատուցվող ծառայության շահառու: Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրով նախատեսված դեպքերում դիմումատուն կարող է նաև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել մասնավոր գործընկերոջ հետ՝ լրացուցիչ ծառայություններ ստանալու համար, (օրինակ՝ անձը հաստատող փաստաթուղթը սեղմ ժամկետում ստանալու համար՝ լրավճարի դիմաց):

Նոր օրենքով նախատեսվում են նաև կարգավորումներ անձը հաստատող փաստաթղթի տրամադրման գործընթացում ծագած վեճերի լուծման վերաբերյալ: Մասնավորապես, մասնավոր գործընկերոջ գործողություններին անհամաձայն լինելու դեպքում անձը, նախ, ոչ գույքային պահանջներով դիմում է լիազոր մարմին, որի որոշումը պարտադիր է մասնավոր գործընկերոջ համար: Լիազոր մարմնի կողմից բողոքը մերժվելու դեպքում անձը իրավունք ունի դիմել դատարան:

Նշված կարգավորումների ամրագրումից հետո անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչվեն այլ օրենքներում անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման հարցերին վերաբերող

իրավակարգավորումները, և այլ օրենքներում անձը հաստատող փաստաթղթերին առնչվող հարցերով հղում կատարել անձը հաստատող փաստաթղթի մասին օրենքին:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք.

Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է սահմանել անձը հաստատող փաստաթղթի մասին մեկ միասնական օրենսդրական ակտ, որով կկարգավորվեն անձը հաստատող փաստաթղթի տեսակները, դրանց տրամադրման, մերժման, անվավեր ճանաչման, ուժը կորցնելու և այլ հարաբերություններ: Կկարգավորվեն նաև պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում մասնավոր գործընկերոջ ներգրավմամբ պայմանավորված մի շարք հարցեր:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծերի փաթեթի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրի՝ 2.3-րդ գլխի **«Թվայնացում»** բաժնի **«Նույնականացման և իրավասությունների ճանաչման արդիական համակարգի ներդրում»** կետից:

ՀՀ ներքին գործերի նախարարություն